

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ.2/6

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք.Երևան
Ժ.11.00

23 դեկտեմբերի 2009թ.

Մասնակցում էին՝

Երևանի ավագանու 45 անդամներ

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

- 1.Օրակարգի նախագծի հաստատում:
- 2.«Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը Երևան համայնքի անդամակցության մասին:
- 3.Երևան քաղաքի և «քաղաք Կալինինգրադ» քաղաքային շրջանի միջև առևտրա-տնտեսական, գիտատեխնիկական, հումանիտար-մշակութային բնագավառներում համագործակցության վերաբերյալ:
- 4.Երևան քաղաքի զարգացման 2010-2013թթ. քառամյա ծրագրի հաստատման մասին:
5. Երևան քաղաքի զարգացման 2010թ. ծրագրի հաստատման մասին:
- 6.Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի «Երևան քաղաքում տեղական տուրքի և վճարների 2010 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» N46-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:
- 7.Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ:
- 8.Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** – Օրակարգի նախագծի հաստատման մասին:

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել 23.12.2009թ. Երևանի ավագանու արտահերթ նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ - 45
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. **ԼՍԵՑԻՆ** – «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը Երևան համայնքի անդամակցության մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Անդամակցել «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը:

2. Երևան համայնքի բյուջեում նախատեսել «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության անդամության վճար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ - 45
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3. **ԼՍԵՑԻՆ** – Երևան քաղաքի և «Քաղաք Կալինինգրադ» քաղաքային շրջանի միջև առևտրա-տնտեսական, գիտատեխնիկական, հումանիտար-մշակութային բնագավառներում համագործակցության մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել 2009թ. նոյեմբերի 11-ին Կալինինգրադ քաղաքում Երևան քաղաքի և «Քաղաք Կալինինգրադ» քաղաքային շրջանի միջև առևտրա-տնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար-մշակութային բնագավառներում համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ - 45
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

4. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի զարգացման 2010-2013թթ. քառամյա ծրագրի հաստատման մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1.Հաստատել Երևան քաղաքի զարգացման 2010-2013թթ. քառամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման 2010-2013թթ. քառամյա ծրագիրը ենթակա է հրապարակման «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 56-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված կարգով, իսկ ծրագրի հիմնական ցուցանիշները, վիճակագրական և գրաֆիկական տվյալները նաև առանձին տեղեկատուներով և գրքույկներով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Պողոս Փլավյանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ - 45
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

5. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի զարգացման 2010թ. ծրագրի հաստատման մասին:

ՈՐՈՇՎԵՑ –1.Հաստատել Երևան քաղաքի զարգացման 2010թ. ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման 2010թ. ծրագիրը ենթակա է հրապարակման «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 56-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված կարգով, իսկ ծրագրի հիմնական ցուցանիշները, վիճակագրական և գրաֆիկական տվյալները նաև առանձին տեղեկատուներով և գրքույկներով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ - 45
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

6. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի «Երևան քաղաքում տեղական տուրքի և վճարների 2010 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» N46-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1.Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի «Երևան քաղաքում տեղական տուրքերի և վճարների 2010 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» N 46-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի N 1 և N 2 հավելվածների 1-ին գոտուց հանել ստորև նշված բառերը՝

Արաբկիր	Ա. Խաչատրյան փող.
Արաբկիր	Գյուլբենկյան փող.
Արաբկիր	Գրիբոյեդովի փող.
Արաբկիր	Մամիկոնյանց փող.
Արաբկիր	Վրացական փող.
Արաբկիր	Բաբայան փող.
Դավթաշեն	Իոսիֆյան փող
Նոր Նորք	Գյուլիքնիսյան փող.
Շենգավիթ	Մանանդյան փող.
Շենգավիթ	Մանթաշյան փող.
Շենգավիթ	Արագածի փող.
Շենգավիթ	Եղբայրության փող.
Քանաքեռ-Զեյթուն	Ներսիսյան փող.

2) որոշման 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի N 1 և N 2 հավելվածների 2-րդ գոտին լրացնել ստորև նշված բառերով՝

Արաբկիր	Ա. Խաչատրյան փող.
Արաբկիր	Գյուլբենկյան փող.
Արաբկիր	Գրիբոյեդովի փող.
Արաբկիր	Մամիկոնյանց փող.
Արաբկիր	Վրացական փող.
Արաբկիր	Բաբայան փող.
Դավթաշեն	Իոսիֆյան փող
Նոր Նորք	Գյուլիքնիսյան փող.
Շենգավիթ	Մանանդյան փող.
Շենգավիթ	Մանթաշյան փող.
Շենգավիթ	Արագածի փող.
Շենգավիթ	Եղբայրության փող.
Քանաքեռ-Զեյթուն	Ներսիսյան փող.

3) որոշման 1-ին կետի 11-րդ ենթակետի «10000» թիվը փոխարինել «1000» թվով:

4) որոշման 1-ին կետի 13-րդ ենթակետի «բ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«բ. 501-ից-1500 քառակուսի մետր մակերեսի համար 500.000 դրամ գումարած 500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 500 դրամ:

1500 քառակուսի մետր մակերեսից սկսած 1000000 դրամ գումարած 1500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 50 դրամ»:

5) որոշման 1-ին կետի 14-րդ ենթակետի «բ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«բ. 501-ից-1500 քառակուսի մետր մակերես ունեցող հողամասի համար 250.000 դրամ գումարած 500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 250 դրամ:

1500 քառակուսի մետրից ավելի մակերես ունեցող հողամասերի համար 500.000 դրամ գումարած 1500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 50 դրամ»:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ - 45
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

7. ԼՍԵՑԻՆ – Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի մասին:

ՈՐՈՇՎԵՑ –1. Հաստատել Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ.

1) հողամասերն օգտագործման տրամադրելու և օտարման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմանը համապատասխան.

2) հողամասերը հրապարակային սակարկություններով օտարելու դեպքում մեկնարկային գինը որոշվում է Երեւան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Համաձայնություն տալու մասին» N 11-Ա որոշմամբ.

3) Ինքնակամ կառույցների օգտագործման տրամադրելու եւ օտարման հետ կապված հարաբերությունները՝ համաձայն Երեւան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման եւ տնօրինման մասին» N 12-Ա որոշման, ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման եւ տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմանը համապատասխան.

4) քանդման ենթակա վթարային բնակելի տների եւ հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարանների հատկացման կամ այդ բնակարանների տնօրինման հետ կապված հարաբերությունները՝ համաձայն Երեւան քաղաքի ավագանու 2009 թվականի սեպտեմբերի 23-ի «Երեւան համայնքի վարչական տարածքում քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու եւ Երեւանի քաղաքապետին իրավասություններ վերապահելու մասին» N 23-Ա եւ «Երեւան համայնքի վարչական տարածքում քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու եւ Երեւանի քաղաքապետին իրավասություններ վերապահելու մասին» N 24-Ա որոշումների, ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի «Երեւան քաղաքի քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչներին բնակարաններ հատկացնելու կարգը հաստատելու մասին» N 172-Ն եւ 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» N 682 որոշումներին համապատասխան:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ - 45
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

8. ԼՄԵՑԻՆ – Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հ ա ս տ ա տ ե լ `

1) Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեն `

ա. ե կ ամ ու տ ն ե թ ի գ ծ ո վ` 52,045,700.4 հ ա գ . դ թ ամ ,
բ . ծ ա խ ս ե թ ի գ ծ ո վ` 52,845, 700.4 հ ա գ . դ թ ամ ,
գ . դ ե ֆ ի գ ի տ ը (պ ա կ ա ս ու ը) 800,000 հ ա գ . դ թ ամ :

2) Ե թ լ ան ի 2010 թ վ ա կ ան ի բ յ ու ջ ե ի վ ա թ չ ա կ ան և ֆ ո ն ն դ ա յ ի ն
մ ա ս ե թ ի ե կ ամ ու տ ն ե թ ն` ը ս տ ձ և ա վ ո թ մ ան ա դ բ յ ու ը ն ե թ ի` հ ա մ ա ձ ա յ ն
հ ա վ ե լ վ ա ծ հ .1-ի .

3) Ե թ լ ան ի 2010 թ վ ա կ ան ի բ յ ու ջ ե ի վ ա թ չ ա կ ան և ֆ ո ն ն դ ա յ ի ն
մ ա ս ե թ ի գ հ ա տ կ ա գ ու մ ն ե թ ն` ը ս տ բ յ ու ջ ե տ ա յ ի ն ծ ա խ ս ե թ ի
գ ո թ ծ ա ճ ա կ ան դ ա ս ա կ ա թ գ մ ան` հ ա մ ա ձ ա յ ն հ ա վ ե լ վ ա ծ հ .2-ի .

4) Ե թ լ ան ի 2010 թ վ ա կ ան ի բ յ ու ջ ե ի վ ա թ չ ա կ ան և ֆ ո ն ն դ ա յ ի ն
մ ա ս ե թ ի գ հ ա տ կ ա գ ու մ ն ե թ ը` ը ս տ բ յ ու ջ ե տ ա յ ի ն ծ ա խ ս ե թ ի
տ ն տ ե ս ա գ ի տ ա կ ան դ ա ս ա կ ա թ գ մ ան` հ ա մ ա ձ ա յ ն հ ա վ ե լ վ ա ծ հ .3-ի .

5) Ե թ լ ան ի 2010 թ վ ա կ ան ի բ յ ու ջ ե ի դ ե ֆ ի գ ի տ ը (պ ա կ ա ս ու ը)`
հ ա մ ա ձ ա յ ն հ ա վ ե լ վ ա ծ հ .4-ի .

6) Ե թ լ ան ի 2010 թ վ ա կ ան ի բ յ ու ջ ե ի դ ե ֆ ի գ ի տ ի (պ ա կ ա ս ու ը)`
ֆ ի ն ան ս ա վ ո թ մ ան ա դ բ յ ու ը ն ե թ ը` հ ա մ ա ձ ա յ ն հ ա վ ե լ վ ա ծ հ .5-ի .

7) Ե թ լ ան ի 2010 թ վ ա կ ան ի բ յ ու ջ ե ի վ ա թ չ ա կ ան և ֆ ո ն ն դ ա յ ի ն
մ ա ս ե թ ի գ հ ա տ կ ա գ ու մ ն ե թ ը` ը ս տ բ յ ու ջ ե տ ա յ ի ն ծ ա խ ս ե թ ի
գ ո թ ծ ա ճ ա կ ան և տ ն տ ե ս ա գ ի տ ա կ ան դ ա ս ա կ ա թ գ մ ան` հ ա մ ա ձ ա յ ն
հ ա վ ե լ վ ա ծ հ .6-ի .

8) ս ու յ ն ո թ ո շ մ ան հ .6 հ ա վ ե լ վ ա ծ ո վ հ ա ս տ ա տ վ ա ծ հ ա տ կ ա գ ու մ ն ե թ ի
վ ե թ ծ ան ու մ ը` ը ս տ Ե թ լ ան ի վ ա թ չ ա կ ան շ թ ջ ան ն ե թ ի և Ե թ լ ան ի
ք ա դ ա ք ա պ ե տ ա թ ան ի (ա ո ան գ Ե թ լ ան ի վ ա թ չ ա կ ան շ թ ջ ան ն ե թ ի)`
հ ա մ ա ձ ա յ ն հ ա վ ե լ վ ա ծ հ .7-ի :

2. Թ ու յ լ ա տ թ ե լ Ե թ լ ան ի ք ա դ ա ք ա պ ե տ ի ն ս ա հ մ ան ե լ ս ու յ ն
ո թ ո շ մ ամ բ հ ա ս տ ա տ վ ա ծ բ յ ու ջ ե տ ա յ ի ն ծ ա խ ս ե թ ի տ ն տ ե ս ա գ ի տ ա կ ան
դ ա ս ա կ ա թ գ մ ան դ թ ամ ա շ ն ո թ հ ն ե թ ի և ս ու ը ս ի դ ի ան ե թ ի հ ա մ ա թ
ն ա խ ա տ ե ս վ ա ծ հ ո դ վ ա ծ ն ե թ ո վ հ ա տ կ ա գ ու մ ն ե թ ի վ ե թ ծ ան ու մ ը` ը ս տ
ս տ ա գ ո դ կ ա գ մ ա կ ե թ պ ու թ յ ու ն ն ե թ ի :

Ք Վ Ե Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒՆ – կ ո ղ մ - 45
դ ե մ – 0
ձ ե ո ն պ ա հ – 0

Ո թ ո շ ու մ ն ը ն դ ու ն վ ե գ մ ի ա ձ ա յ ն

Նիստի վերջում հայտարարությամբ հանդես եկավ Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավարը:

Նա արդյունավետ գնահատեց կատարված աշխատանքը և հույս հայտնեց, որ ՀՀԿ-ԲՀԿ նմանօրինակ գործակցությունը կնպաստի մայրաքաղաքի զարգացմանը:

Երևանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանն ամփոփելով Երևանի ավագանու 2009 թվականի գործունեությունը, նշեց, որ այսօր Երևանն ու երևանցին ավագանու անդամներից աշխատանք են պահանջում, իսկ ավագանին իր արդյունավետ գործունեությամբ փաստեց, որ կարող է լուծել երևանցու խնդիրները և 2010 թվականին պետք է եռապատկել ջանքերը, հոգուտ՝ մայրաքաղաքի բարեկեցության:

Քաղաքապետ Գ.Բեգլարյանը շնորհավորեց բոլորի գալիք Ամանորը, շնորհակալություն հայտնեց և հաջողություն մաղթեց բոլորին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ